ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 28-Ն

«19» օգոստոսի 2015 թվական գյուղ Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 02-ի թիվ 766-Ն որոշումը. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 45-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. 2015թ. բյուջեի «Ընդամենը եկամուտներ» տողի «43,733.9» թիվը փոխարինել «50,933.9» թվով. այդ թվում՝
   ա) 2015թ.բյուջեի «Վարչական մաս» տողի «43,733.9» թիվը փոխարինել «46,533.9» թվով:
   բ) 2015թ.բյուջեի «Ֆոնդային մաս» տողի «0.0» թիվը փոխարինել «4,400.0» թվով:
2. 2015թ. բյուջեի եկամտային մասի «Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» 1257 տողի «0.0» թիվը փոխարինել «2,800.0» թվով:
3. 2015թ. բյուջեի եկամտային մասի «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» 1261 տողի «0.0» թիվը փոխարինել «4,400.0» թվով:

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ծախսեր» տողի «ընդամենը» սյունակի «45,477.0» թիվը փոխարինել «52,677.0» թվով.
   այդ թվում
   ա) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «ընդամենը ծախսեր» տողի «Վարչական մաս» սյունակի «43,733.9» թիվը փոխարինել «46,533.9» թվով:

բ) Բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման «Ընդամենը ծախսեր» տողի «Ֆոնդային մաս» սյունակի «1,743.1» թիվը փոխարինել «6,143.1» թվով:

2. 2015թ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 9, դաս 2 «Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» տողի «Վարչական մաս» սյունակի «0.0» թիվը փոխարինել «2,800.0» թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածի «Վարչական մաս» սյունակի «2,800.0» թիվը փոխարինել «5,600.0» թվով:

3. 2015թ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 9, դաս 1 «Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)» տողի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Հողի իրացումից մուտքեր» 8411 հոդվածի «ֆոնդային մաս» սյունակի «0.0» թիվը փոխարինել «-178.8» թվով:

4. 2015թ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 «Ճանապարհային տրանսպորտ» տողի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» 5112 հոդվածի «ֆոնդային մաս» սյունակի «1,743.1» թիվը փոխարինել «1.9» թվով:

5. 2015թ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» տողի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Պահուստային միջոցներ» 4891 հոդվածի «Վարչական մաս» սյունակի «1,701.9» թիվը փոխարինել «1,621.9» թվով:

6. 2015թ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 04, խումբ 2, դաս 1 «Գյուղատնտեսություն» տողի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածի «ֆոնդային մաս» սյունակի «0.0» թիվը փոխարինել «6,000.0» թվով:

7. 2015թ. բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 09, խումբ 1, դաս 1 «Նախադպրոցական կրթություն» տողի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածի «ֆոնդային մաս» սյունակի «0.0» թիվը փոխարինել «400.0» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Չեռնպահ՝ 0

ԱՇՈՏ ԿԱՐՈՅԱՆ	կողմ	/ ---------- /
ՌԱՖԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	կողմ	/ ---------- /
ՄԿՐՏԻՉ ՄՈՎՍԻՍՅԱՆ	կողմ	/ ---------- /
ԳՆԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ	կողմ	/ ---------- /
ՂԱՐԻԲ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ	կողմ	/ ---------- /

ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

19 օգոստոսի 2015 թվական
գյուղ Անուշավան